ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 մայիսի 2021թ.

2021 թվականի մայիսի 10-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին, Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանն ու Արտյոմ Ավագյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Միշա Եղիազարյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Ջինավոր Սարգսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

2.Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

Համայնքի ավագանու որոշումների նախագծերիի քննարկում:

Օրակարգի առաջին՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի վերաբերյալ Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող մի քանի բնակարանների համար հաստատվել էին մեկնարկային գներ: Հաշվի առնելով, որ

բնակարանների շուկայական գները փոփոխվել են, Բյուրեղավանի համայնքապետարանի պատվերով «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի ապրիլին կատարվել է վերագնահատում:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «145-01/Վ-021», «146-01/Վ-021», «147-01/Վ-021», «148-01/Վ-021» և «149-01/Վ-021» գրություններն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի «Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին» N 59-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Օրակարգի երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին հարցի վերաբերյալ Մ. Եղիազարյանը ներկայացրեց, որ Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի *(Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:),* հիմք ընդունելով «Վարմօն Ռիելթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 19-ի «144-01/Վ-021», ապրիլի 21-ի «151-01/Վ-021», «151Ա-01/Վ-021», «151Բ-01/Վ-021», «151Գ-01/Վ-021», ապրիլի 22-ի «150-02/Վ-021» և ապրիլի 30-ի «175-01/Վ-021» ու «175Ա-01/Վ-021» գրությունները՝ ավագանին որոշում է համաձայնություն տալ Բյուրեղավան համայնքի ղեկավարի առաջարկությանը աճուրդային (դասական աճուրդ) կարգով օտարելու Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ գույքերը՝

1)Բյուրեղավան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոց թիվ 2/84 հասցեի 82.9 քմ ընդհանուր մակերեսով տնտեսական շինությունն ու ավտոտնակը և դրանց զբաղեցրած 145.32 քմ մակերեսով հողամասը (վկայական N 2711164, տրված 2010 թվականի օգոստոսի 11-ին, կադաստրային համարը՝

07-003-0025-0094, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման),

2) Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 17.41 քմ մակերեսով 1 բնակարանը (վկայական N 03112017-07-0139),

3) Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 22.12 քմ մակերեսով 90 բնակարանը (վկայական N 03112017-07-0104),

4) Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 16.62 քմ մակերեսով 80 բնակարանը (վկայական N 03112017-07-0119),

5) Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 14.01 քմ մակերեսով 65 բնակարանը (վկայական N 17032017-07-0063),

6) Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 16.5 քմ մակերեսով 69 բնակարանը (վկայական N 03112017-07-0056),

7) Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 13.29 քմ մակերեսով 35 բնակարանը (վկայական N 01042014-07-0016),

8) «ՊՏ-165 Մ» մակնիշի խոտհավաքիչ մամլիչը:

Սույն որոշման նախագծով հաստատման է ներկայացվում վերը նշված գույքերի մեկնարկային գները:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան